

ՄՏԱՑԱՆՔ

ԹՈՒՔԱԽՏԸ (Ելնդուկ), գրեց՝ Բժ. Բ. Սևեան. հրատ. Հալէպի Միջ-Հայրենակցական Միութեան, Հալէպ, 1930: 65 էջ, գին միայն 1 ֆրանք: Դիմել՝ հեղինակին Pharmacie Selian, rue Tielel, Alep

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ, Գիրք Ա. գրեց՝ Եղիազար Մուրատեան, Աղեքսանդրիա 1929. գին՝ կէս տոլար:

«Բուժամբ»ի ընթերցողներէն անոնք որ հաւաքածոյ չեն կազմեր, թող բարի ըլլան մեզ դրկել 37, 38, 39 և 40 թիւերը, որոնց փոխարէն պիտի ստանան նոր թիւեր կամ նոյն արժէքով գիրքեր:

«ՆԱՀԱՏԱԿ ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՐՆԵՐ»

ԿՈՉ

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ

Բաղմաթիւ արեւմտահայ տաղանդաւոր գրողներ պատերազմի ընթացքին զոհուած են առանց հայ գրականութեան կտակած ըլլալու առանձին հատորով իրենց գեղարուեստական էջերը: Ուրիշներ դեռ պատերազմէն առաջ մեռած են ցանուցիր թողլով իրենց երկերը՝ դանազան օրաթերթերու և պարբերականներու մէջ:

Հայ ժողովրդի համատարած թշուառութեան, ընթացիկ հոգերու ու պանդուխտ կեանքի բաղմաթիւ դժուարութեանց հետեանքով հայ մտաւորականութիւնը, պանդուխտ ու ցանուցիր ինք ալ՝ պատերազմի դադարումէն ահա՝ տալիս տարի յետոյ տակաւին հաւաքական որ և է լուրջ ձեռնարկ չընեն ամփոփելու և հրատարակելու համար հայ գրչի այդ ազնիւ աշխատանքներուն ցրուած էջերը: Համեմատական հանգիստի օրեր են այսուհանդերձ ու պէտք է որ այլևս կատարուի այդ աշխատանքը:

Ձայն կատարելու համար՝ պէտք է սկսիլ անմիջապէս աշխատանքի, մեկնելով համեստ ու ժողովրդական ծրագրէ մը: Այսպէս է որ Փարիզ ապրող ու գրականութեամբ և հայ մշակոյթով շահագրգռուած քանի մը անձեր* այս նպատակով կազմած են «Նահատակ Գրադէտներու Բարեկամներ» անունով հրատարակչական մը որ պարբերական հրատարակութիւններով պիտի աշխատի փրկել արեւմտահայ նահատակ կամ մեռած գրադէտներու երկերը՝ ցրուած դանազան պարբերականներու կամ թերթերու մէջ:

Նահատակ Գրադէտներու Բարեկամները կ'առաջադրեն հաւաքել ու հրատարակութեան տալ նահատակ կամ մեռած գրողներու երկերը՝

(*) Ս. Վրացեան, Մկրտիչ Պարսամեան, Լեւոն Մօզեան, Բժ. Լ. Գրիգորեան, Մկրտիչ Երիցանց, Կարօ Սասունի, Շ. Նարդունի, Վազգէն Շուշանեան և Օհան Կարօ:

կցելով անոնց՝ գրողին կեանքին ու գործին շուրջ ուսումնասիրութիւններ։ Այս հրատարակութեանց ընթացքին նախապատուութիւն կը տրուի այն նահատակ հեղինակներուն որոնցմէ առանձին հատորով լոյս տեսած երկեր չկան։

Հրատարակչականը տարին անգամ մը հաշիւ կուտայ նախ համառօտ տեղեկագրութեան մը միջոցաւ՝ կցուած հրատարակուած հատորին ու երկրորդ հայերէն թերթերու մէջ։

Հրատարակուած հատորներու վաճառումէն դոյացած բոլոր հասոյթները կը յատկացուին նոր հատորներու հրատարակութեան։

Ընելով այս կոչը ձեզ և պարզելով այս ծրագիրը մենք կը հաւատանք որ ամբողջ սրտով պիտի աջակցիք մեզ և քաջալեր հանդիսանաք մեր ձեռնարկին՝ տարածելով և սիրելի դարձնելով հայ գրականութեան նշխարները փրկելու գաղափարը։ Այն հեղինակները որ կ'ողենք փրկել կորուստէ կամ մոռացումէ, արժանի են ամէն կերպով մեր երախտագիտութեան։ Բազմաթիւ են անոնք՝ երիտասարդ ու տաղանդաւոր արձակագիր Գեղամ Բարսեղեանէն սկսեալ մինչև Մշոյ Գեղամ Տէր Կարապետեանը։ Ո՛ր մէկը յիշել, Արտաշէս Յարութիւնեանը (Մալկարացի Կարօ) Երուանդ Սրմաքէշխանլեանը (Երուխան) Տիգրան Չօկիւրեանը, Ռուբէն Սևակը, Արփիար Արփիարեանը, Տիգրան Գասապեանը, Հրա՛նդը (Մ. Կիւրճեան) որ տարիներու ընթացքին աշխատած են հայ գրականութեան համար։ Մեզ կը մնայ յարգել իրենց յիշատակը հաւաքական լուրջ ու լիակատար ճիգով մը՝ կորուստէ փրկելով իրենց գրական նշխարները։ Այսպիսով մեծ ծառայութիւն մը մատուցած կ'ըլլանք նաև հայ մշակոյթին։

« Ն Ա Հ Ա Տ Ա Կ Գ Ր Ա Գ Է Տ Ն Ե Ր Ո Ւ . Բ Ա Ր Ե Կ Ա Մ Ն Ե Ր »

(Ընդհ. հասցէ. — Dr Krikorian, 126, Fbg. St Denis;) Paris.

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է

ՌՈՒԲԷՆ ԶԱՐԴԱՐԵԱՆԻ

Ամբողջական երկերու Ա. հատորը

ԱՐՁԱԿ ԷԶԵՐ] ԵՒ ՀԵՔԵԱԹՆԵՐ

(Առաջին հրատարակութիւն Ն. Գ. Բ. ի)

Գեղեցիկ տպագրութեամբ, գեղազարդ կողմով և հեղինակին պատկերով։

Գինն է՝ 20 ֆր. (Ֆրանսա և գաղութներ, Պալեաններ) և 25 ֆրանկ—մէկ տուար (մնացեալ երկիրներ)։ Այս գնով, սահմանափակ թիւով և ընտիր թուղթի վրայ թուագրուած օրինակներ կը ստանան անոնք որ մինչև Մայիս 30 վերևի հասցէին կը դրկեն գրքին փոխարժէքը (չէֆով, մանտափոսթով և այլն)։

Imp. de Navarre, 5, rue des Gobelins. Paris XIII.